

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԱՅԻՆ ԿԱԶՄԸ¹

Դավիթ Բակլաջյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Մասնագիտական պատասխանատվության ապահովագրության հիմնական նշանակությունը ռիսկերի կառավարման² և պատճառված վնասների փոխհատուցման ճկուն գործիք³ լինելն է, որով էլ պայմանավորված է նրա դերը տնտեսության մեջ: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, հաշվի առնելով միջազգային պրակտիկան, մասնագիտական պատասխանատվության ապահովագրությունը հետապնդում է երկու նպատակ⁴. պաշտպանել հաճախորդին մասնագիտական գործունեություն ծավալող սուբյեկտի կողմից պատճառված վնասի դիմաց անվճարունակությունից և հեռու պահել նույն սուբյեկտին «կործանումից» թույլ տված մասնագիտական սխալի համար:

Վերը նշված նպատակներից ակներև է, որ քննարկվող ինստիտուտում իրավահարաբերության մասնակիցները առանձնանում են իրենց կարգավիճակով և մասնակցության աստիճանով: Մասնագիտական պատասխանատվության ապահովագրությունը իրենից ենթադրում է հասրակական հարաբերությունների բազմաշերտ համակարգ, որում մի կողմից հանդես են գալիս ապահովագրության պայմանագրով կողմեր հանդիսացող սուբյեկտները, իսկ մյուս կողմից մասնագիտական գործունեություն իրականացնելու կապակցությամբ առաջացած քաղաքացիական պարտավորության մեջ պատվիրատուն և ծառայություններ մատուցողը: Փաստորեն մասնագիտական պատասխանատվության ապահովագրության սուբյեկտների մասին խոսելիս պետք է քննարկման առարկա դարձնենք մի կողմից «ապահովագրող» ու «ապահովադիր», «պատվիրատու» ու «ծառայություններ մատուցող» և մյուս կողմից «վնասներ կրած անձ» ու «ապահովագրող» սուբյեկտների միջև ձևավորված իրավահարաբերությունները:

Մասնագիտական պատասխանատվության ապահովագրության իրավահարաբերությունների հիմնական սուբյեկտներն են ապահովադիրը, շահառուն և ապահովագրողը⁵: **Ապահովագրողի** դերում կարող են հանդես գալ միայն իրավաբանական անձինք, որոնք կարող են ստեղծել բացառապես որպես բաժնետիրական ընկերություն կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: Ապահովագրական ընկերությունը միաժամանակ կարող է իրականացնել կյանքի ապահովագրություն և վերաապահովագրություն կամ ոչ կյանքի ապահովագրություն և վերաապահովագրություն:

¹ Սույն հոդվածը գեկուցվել է 2022թ. դեկտեմբերի 8-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:

² Տե՛ս **Молчанова И. С.** Понятие риска в договоре имущественного страхования, Дисс. ... к.ю.н., Санкт Петербург, 2014, էջ 20:

³ Տե՛ս **Лонгина Н. В.** Правовое регулирование страхования в РФ, Дисс. ... к.ю.н., Москва, 1998, էջ 5:

⁴ Տե՛ս **Жалинский А., Рерихт А.** Введение в немецкое право. М., 2001, էջ 280-281:

⁵ Տե՛ս **Елкин М. А.** Система правового регулирования страхования в РФ, Дисс. ... к.ю.н., Москва, 2003, էջ 125:

Ապահովագրական գործունեություն իրականացնելու համար ընկերությունը պետք է ունենա նշված գործունեության լիցենզիա: Ապահովագրական ընկերությունը կարող է իրականացնել միայն այն դասերի ապահովագրություն, որի լիցենզիան տրամադրվել է իրեն: Առանց համապատասխան դասի ապահովագրություն իրականացնելու լիցենզիայի կնքված ապահովագրության պայմանագրերի նկատմամբ կիրառելի են գործարքների անվավերության հետևանքները (հոդված 314): Ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիան տրամադրվում և ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: Ապահովագրական գործունեության լիցենզիան տրվում է անժամկետ:

Ապահովագրողի կարգավիճակի և գործունեության կարգի մասին դրույթները հիմնականում ամփոփ ձևով ներկայացված են թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (այսուհետ՝ նաև՝ Օրենսգիրք), թե՛ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում, ինչը թույլ է տալիս միայն ընդհանուր հատկանիշներով անդրադառնալ մասնագիտական պատասխանատվության ապահովագրության տվյալ մասնակցի դերը գնահատելիս մյուս մասնակիցների հետ փոխհարաբերություններում:

Ավելի հետաքրքրական և առանձնահատուկ դեր է վերապահված մյուս մասնակիցների կարգավիճակի և փոխհարաբերության հարցին ապահովագրության քննարկվող տեսակում:

Այսպես, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ **ապահովագրողն**՝ ապահովագրության պայմանագրի այն կողմն է, որին կամ որի մատնանշած անձին (շահառու) ապահովագրողը պարտավորվում է հատուցել ապահովագրության պայմանագրով նախատեսված իրադարձության (ապահովագրական պատահարի) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար պայմանագրով նախատեսված իրադարձության (ապահովագրական պատահարի) տեղի ունենալու ուժով՝ ըստ ապահովագրության պայմանագրի պայմանների: Որպես ապահովագրող կարող է հանդես գալ քաղաքացիաիրավական հարաբերությունների ցանկացած սուբյեկտ:

Ապահովագրության պայմանագրում կարող է սահմանվել պայման այն մասին, որ ապահովագրական հատուցումը վճարվելու է ոչ թե ապահովագրողին, այլ վերջինիս կողմից նշված երրորդ անձին՝ շահառուին: Վերջինս ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)¹ 998-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ շահառուի առկայության դեպքում ապահովագրության վկայագիրը պետք է ներառի վերջինիս անունը կամ անվանումը, գտնվելու վայրն ու հեռախոսահամարը: **Այսինքն՝ վկայագրում հստակ պետք է նշված լինի այն անձը, ով հանդիսանում է շահառու:**

Նման կարգավորումների պայմաններում ստացվում է մի իրավիճակ, երբ մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագրի կնքումից հետո առաջացած ապահովագրական պատահարի արդյունքում 3-րդ անձը փաստացի ձեռք է բերում շահառուի կարգավիճակ, սակայն վերջինիս անունը ապահովագրության պայմանագրում նշված չէ որպես շահառու և չէր էլ կարող նշված լինել, քանի որ ժամանակագրական առումով մասնագիտական գործունեություն ծավալող սուբյեկտի և ապահովագրողի միջև ապահովագրության պայմանագրի կնքումը նախորդում է ապագա շահառուի հետ կնքվելիք մասնագիտական ծառայությունների մատուցման պայմանագրին, և **ապահովագրության պայմանագրի կնքման պահին հայտնի չէ, թե ապագայում շահառուների ի՞նչ շրջանակների**

¹ Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: ՀՀՊՏ 1998.08.10/17(50) ՀՕ-239:

Կնատուցվեն մասնագիտական ծառայություններ:

Ասվածի կարևորությունը ընդգծելու համար նշենք, որ ի տարբերություն ապահովագրության մի շարք այլ տեսակների (գույքի ապահովագրություն, առողջության ապահովագրություն և այլն)՝ մասնագիտական պատասխանատվության ապահովագրության դեպքում ապահովադիրը երբեք չի հանդիսանում վնաս կրած անձ, հետևաբար նաև մեծանում է ռիսկը նշված պայմանագրի շրջանակներում ապահովագրական շահ չհետապնդելու մեջ¹: Փաստորեն, եթե մասնագիտական սխալի հետևանքով վնաս կրած երրորդ անձին չտրամադրենք շահառուի կարգավիճակ, վերջինս կգրկվի ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրողին անմիջականորեն հատուցման դիմում ներկայացնելու և ապահովագրական հատուցում ստանալու իրավունքներից: Ապահովագրական վարույթ հարուցելու միակ նախաձեռնող սուբյեկտ կմնա ապահովադիրը, ով չունի ապահովագրական շահ պատճառված վնասները երրորդ անձին հատուցելու հարցում:

Պատասխանատվության ապահովագրության տեսակներից մեկի՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության դեպքում վերը նշված խնդիրը լուծել են վնաս կրած երրորդ անձին տուժողի կարգավիճակ տրամադրելով, որին էլ իրավունք է ընձեռնել սահմանված կարգով հատուցում ստանալու: Այսպես, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ **տուժող են (տուժած անձ)** ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով սույն օրենքով նախատեսված անձնական կամ գույքին պատճառված վնասներ կրած ցանկացած անձ, որը սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ունի հատուցման իրավունք: Տուժող են համարվում նաև սույն կետի առաջին նախադասությամբ նախատեսված՝ անձի մահվան դեպքում օրենքի համաձայն վնասների հատուցման իրավունք ունեցող անձինք:

Մեր գնահատմամբ, նմանատիպ կարգավորումը կիրառելի չէ մասնագիտական պատասխանատվության ապահովագրության դեպքում հետևյալ հիմնավորմամբ.

- նախ, ի տարբերություն ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության, մասնագիտական պատասխանատվության ապահովագրությունը մեծամասամբ կնքվում է կամավոր հիմունքներով, ինչը ենթադրում է, որ այն չունի մանրամասն նորմավորված կարգավորում: Այսինքն՝ պարտադիր ապահովագրության դեպքում տուժող անձի իրավական վիճակի մասին նորմերը իրենց տեղն են գտել ոլորտը կարգավորող օրենքներում և այլ իրավական ակտերում (օրինակ՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտը կարգավորվում է նաև Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո ՀԿ-ի թիվ RL 1-001 կանոններով), իսկ կամավոր ապահովագրության պարագայում խիստ նորմավորված կարգավորումները հակադրվում են նմանաբնույթ պայմանագրերի էությանն ու կարգավորման խնդիրներին նաև այն փաստի հաշվառմամբ, որ պայմանագրի ազատությունն ու կողմերի կամքի ինքնավարությունը չպետք է անհարկի սահմանափակվեն:

- Մյուս բացառող հանգամանքն այն է, որ մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագրով ապահովադիրի և ծառայություններ ստացող երրորդ անձի միջև միշտ առկա են լինում պայմանագրային հարաբերություններ և պատճառված վնասը ծագում է պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով, իսկ պարտադիր

¹ Տե՛ս **Луговец В. Я.** Специфические черты договора страхования профессиональной ответственности, «Юриспруденция». - 2015. - No 1 (26), էջ 159-162:

ապահովագրության քննարկվող դեպքում առաջ են գալիս պատճառված վնասի արտապայմանագրային դրսևորումներ (դելիկտ), ինչը իր հերթին վնաս կրած անձին մեխանիկորեն դարձնում է տուժող անձ: Այս պայմաններում, փաստացի շահառուին տալով տուժողի կարգավիճակ, պատճառված վնասի գնահատումը, հատուցումը և ապահովագրական գործընթացը տեղափոխում ենք պարտադիր ապահովագրության պայմանների դաշտ՝ անտեսելով կողմերի ազատ կամահայտնությամբ կնքված ապահովագրության և ծառայությունների մատուցման պայմանները:

Առաջարկում ենք դիմել «ըստ օրենքի շահառու»¹ անձանց ինստիտուտի օգնությամբ, ինչը նշանակում է, որ օրենսդրությունը իմպերատիվ կարգով սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր ապահովագրության համապատասխան տեսակի պայմանագրի շրջանակներում հանդես են գալիս որպես շահառուներ: Տվյալ դեպքում մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը կհամարվի կնքված հոգուտ այն անձանց (Շահառուի առկայության դեպքում ապահովագրության պայմանագիրը հանդիսանում է հոգուտ երրորդ անձանց պայմանագրերի տարատեսակ²), որոնց կարող է վնաս պատճառվել, որոնք էլ տվյալ պայմանագրի շրջանակներում հանդիսանում են շահառուներ, եթե անգամ պայմանագիրը կնքվել է հոգուտ ապահովագրի կամ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրող այլ անձի, կամ պայմանագրում նշված չէ, թե ում օգտին է այն կնքվել:

Բարձրացված խնդրի վերաբերյալ մեկ այլ լուծում կարող ենք գտնել ՌԴ քաղաքացիական օրենսգրքում գույքի ապահովագրության կապակցությամբ, ինչը հավասարապես կարելի է կիրառել պատասխանատվության ապահովագրության քննարկվող տեսակի նկատմամբ: ՌԴ քաղաքացիական օրենսգրքը³ հնարավորություն է տալիս կնքել գույքի ապահովագրության վկայագրեր հոգուտ շահառուի՝ առանց վերջինիս անունը կամ անվանումը նշելու: Նման վկայագրերն անվանվում են «ըստ ներկայացնողի վկայագրեր», որոնցով նախատեսված պատահարը տեղի ունենալու դեպքում հատուցումը վճարվում է այն անձին, ով այդ նպատակով վկայագիրը ներկայացնում է ապահովագրողին⁴: Հատուցում ստանալու համար շահառուն, վկայագիրը ներկայացնելուց բացի, պետք է նաև ապացուցի իր մոտ ապահովագրական շահի առկայությունը: Ըստ ներկայացնողի վկայագրեր կնքելու հնարավորություն նախատեսված է եղել նաև Օրենսգրքի մինչև 30.09.2007թ. փոփոխությունները գործող խմբագրության 986-րդ հոդվածով: Նման ապահովագրությունը⁵ հատկապես արդյունավետ է մասնագիտական ծառայությունների մատուցման մեկ պայմանագրով անձանց խմբին մատուցվող ծառայությունների դեպքում, քանի որ պատահար տեղի ունենալու դեպքում վկայագիրը հանձնվում է ծառայություններ ստացող և փաստացի վնաս կրած անձին՝ ապահովագրողին ներկայացնելու համար, կամ ապահովագրի անձամբ է դիմում ապահովագրողին⁶: Մեր կարծիքով՝ առևտրային շրջանառությունն առավել դյուրին դարձնելու և ապահովագրական հարաբերությունների զարգացմանը նպաստելու համար անհրաժեշտ է Օրենսգր-

¹ Տե՛ս **Խաչատրյան Մ. Գ.** «Գույքի կամավոր ապահովագրության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», թեկնածուականատեսնախոսություն, Երևան, 2017թ., էջ 74:

² Տե՛ս **Гончаров А.А., Маслова А. В.** Гражданское право (части Общая и Особенная), Москва, Волтерс Клувер, 2010, էջ 204:

³ Տե՛ս Гражданский кодекс РФ, 30.11.1994, N 51-ФЗ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/

⁴ Տե՛ս **Платонова Н. Л.** Научно-практический Комментарий к Федеральному закону «О концессионных соглашениях», Москва, JusUnum, 2015, էջ 54:

⁵ Քննարկվող տեսակի ապահովագրությունը ՌԴ-ում անվանվում է «Страхование за счет кого следует»:

⁶ Տե՛ս **Егорова М. А.** Коммерческие договоры, Москва, Волтерс Клувер, 2011, էջ 249:

քում մասնագիտական պատասխանատվության ապահովագրության «ըստ ներկայացնողի» վկայագրեր կնքելու հնարավորություն նախատեսել:

Ամեն դեպքում «ըստ օրենքի շահառու» անձանց մասին նշումը նորմատիվ իրավական ակտում մեզ համար խնդրի առաջնահերթ լուծման տարբերակն է:

Սույն աշխատանքում անդրադարձել ենք մասնագիտական պատասխանատվության ապահովագրության հիմնական սուբյեկտներին, սակայն ոչ պակաս կարևոր է քննարկվող իրավահարաբերություններում «օժանդակող սուբյեկտի» դերը: Խոսքը ապահովագրական փորձաքննություն իրականացնող անձանց մասին է, ովքեր իրենց իրավասության շրջանակներում կարող են գնահատական տալ՝ դեպքը ապահովագրական պատահա՞ր է, թե՞ ոչ:

Կարծում ենք, որ ապահովագրողները փորձագետների շնորհիվ կարող են ավելի արդյունավետ օգտագործել արտադատական ընթացակարգը՝ երրորդ անձանց և ապահովագրի միջև առաջացած պատճառված վնասի հետևանքները վերացնելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու համար: Մասնագիտական պատասխանատվության ապահովագրության շրջանակներում նշանակված փորձաքննությունը իրենից ներկայացնում է ապահովագրական պատահարի բոլոր հանգամանքների պարզում, ունի նպատակ տալու պատահարի հստակ բնորոշումը և վերականգնելու այն իրադրությունը, որի հետևանքով առաջացել է ապահովագրական պատահարը:

Քանի որ քաղաքացիական հարաբերություններում մասնագիտական գործունեության տարաբնույթ տեսակներ (աուդիտորական, փաստաբանական, փորձագիտական, ձգնաժամերի կառավարման և այլն) օրեցօր ավելի մեծ ծավալներով են մատուցվում քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտներին, ապահովագրողների համար դժվար է տարբեր ոլորտների մասնագիտական հատուկ գիտելիքների տիրապետող մասնագետներ ներագրավել որպես աշխատակիցներ: Ներգրավելու պարագայում էլ կասկածի տակ կորվի աշխատակիցների կողմից ապահովագրական պատահարի բոլոր հանգամանքները օբյեկտիվ և անկողմնակալ քննության ենթարկելը: Անկախ փորձագետների կողմից փորձաքննության իրականացումը ունի օրենսդրական մի շարք երաշխիքներ¹ առ այն, որ կիրականացվի բարձր մակարդակով, և կբացահայտվի մասնագիտական գործունեության յուրաքանչյուր սխալ:

Գտնում ենք, որ պետք է սահմանվեն հիմնական սկզբունքներ², որոնցով իրականացվելու է մասնագիտական գործունեության գնահատման փորձաքննությունը: Դրանք կարող են լինել՝

1. փորձաքննության օրինականությունը
2. ժամանակին կատարվող ապահովագրական քննությունը (անսխալ և օբյեկտիվ իրավիճակը արձանագրող փաստաթղթերի կազմումը ու որպես ապացույց գնահատումը)
3. փորձաքննության պլանավորումը
4. պետական իրավասու մարմինների հետ համագործակցությունը
5. մասնագիտական տվյալ ոլորտը կարգավորող գիտական նվաճումների, չափորոշիչների, նորմատիվների և պարտադիր իրավաբանական ուժ ունեցող ակտերի կիրառումը

Իրականացված փորձաքննության արդյունքում ապահովագրական փորձագետը կարող է եզրակացությամբ պատասխանել՝ արդյո՞ք մասնագիտական գործու-

¹ Տրված ակնհայտ սխալ կամ կեղծ եզրակացության համար օրենքով նախատեսված պատասխանատվության վրա հասնելը, նման գործունեություն իրականացնելու համար հատուկ թույլտվության առկայությունը և այլն:

² **Луговец В. Я.** Правовые основы страхования профессиональной ответственности в РФ, Дисс. ... к.ю.н., Волгоград, 2015թ., էջ 63:

նեություն իրականացնող սուբյեկտը (ապահովադիրը) թույլ է տվել մասնագիտական սխալ՝ առանց անդրադառնալու վերջինիս արարքում մեղքի առկայությանը կամ բացակայությանը: Նշված հանգամանքներին գնահատական տվողը հատուցման գործընթացը կարգավորողն է:

СУБЪЕКТЫ СТРАХОВАНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ¹

Давид Баклачян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

В статье сделана попытка определить наиболее значимые проблемы страхования профессиональной ответственности на современном этапе и пути их преодоления с целью формирования самостоятельного вида страхования ответственности. Необходимость введения общих норм страхования профессиональной ответственности обосновывается отличиями такого договора от договоров страхования договорной и деликтной ответственности как комплексного, имеющего особенности в субъектном составе, страховом интересе, страховом риске договора.

THE SUBJECTS OF PROFESSIONAL LIABILITY INSURANCE²

Davit Baklachyan

PHD student at the YSU Chair of Civil Law

The article attempts to identify the most significant problems of professional liability insurance at the present time and ways to overcome them in order to form an independent type of liability insurance. The need to introduce general norms of professional liability insurance is justified by the differences of such a contract with insurance contracts of contractual and tort liability, as a complex, having features in the subject composition, insurable interest, insurance risk of the contract.

Բանալի բառեր – մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն, պատճառված վնասի համար պատասխանատվության ապահովագրություն, ապահովագրության օբյեկտ, ապահովագրական շահ, ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար, ապահովագրող, ապահովագրված անձ:

Ключевые слова: *страхование профессиональной ответственности, страхование ответственности за причинение вреда, объект страхования, страховой интерес, страховой риск, страховой случай, страхователь, застрахованное лицо.*

Key words: *professional liability insurance, liability insurance for injury, insurance object, insurance interest, insurance risk, insurance case, insurer, insured person.*

¹ Статья было представлена 8 декабря 2022г. на научной конференции аспирантов и соискателей юридического факультета Ереванского государственного университета.

² This article was reported in 2022 December 8 at the scientific session of graduate students and applicants at the YSU Faculty of Law.